

### ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

\_\_\_\_\_, 20 \_\_\_\_ թ.

**Կալիֆորնիայի նահանգ**  
**Սոցիալական ծառայությունների դեպարտամենտ**  
**P.O. Box 944243, M.S. 9-17-37**  
**Սակրամենտո, Կալիֆորնիա 94244-2430**

Ես, \_\_\_\_\_  
(Մնուն, ազգանուն)

\_\_\_\_\_  
(Յասցե) (Քաղաք, նահանգ եւ ինդեքս)

Ինդրել եմ \_\_\_\_\_  
(Մնուն, ազգանուն)

\_\_\_\_\_  
(Կազմակերպություն)

\_\_\_\_\_  
(Յասցե) (Քաղաք եւ ինդեքս)

Իմ անունից հանդես գալու իմ բողոքարկման ժամանակ, որն առնչվում է հետեւյալ ծրագրի համար իմ դիմումին եւ/կամ ստացմանը \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
(Օգնության ծրագիր)

Սույնով լիազորում եմ ձեր դեպարտամենտին՝ սույն պահանջին առնչվող ողջ տեղեկատվությունը տրամադրել վերը նշված անձին/կազմակերպությանը:

Ստորագրություն \_\_\_\_\_

**ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**, ապա խնդրվում է, որ ներկայանաք դատաքննությանը կամ որեւ մեկը ներկայանա Ձեր անունից: Եթե նշանակված ժամին չապահովվի ներկայություն, ապա ողջ գործը կմերժվի: Եթե նույնիսկ նշանակել եք որեւէ այլ անձի, որ ներկայացնի Ձեզ, Ձեր ներկայությունը դատաքննությանը կօժանդակի վարչական օրենքի դատավորին ընդունելու համապատասխան որոշում: Եթե լիազորել եք որեւ մեկին՝ հանդես գալու որպես Ձեր ներկայացուցիչ, այդ լիազորությունը պետք է լինի գրավոր եւ հանձնվի վարչական օրենքի դատավորին դատաքննության ժամանակ: Այդ նպատակով կից ներկայացվում է Լիազոր ներկայացուցչի սույն ձեւաթուղթը: Եթե ցանկանում եք լիազորել որեւէ անձի՝ ներկայացնելու Ձեզ դատաքննության ժամանակ, խնդրում ենք լրացրեք այս ձեւաթուղթը եւ կա՛մ Դուք, կա՛մ էլ Ձեր ներկայացուցիչը Ձեր անունից, ներկայացրեք այն դատաքննությանը: Ձեր ներկայացուցչին պետք է տեղեկացնեք Ձեր դատաքննության ժամի եւ տեղի մասին: Կարող եք նաեւ բերել վկաներ կամ այլ անձինք, որոնք վստահ եք, որ կարող են օգնել Ձեզ՝ բացատրելու Ձեր դիրքորոշումը: Կարող եք նաեւ ներկայացնել ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք գտնում եք, որ կարեւոր են եւ ցանկանում եք, որ քննվեն:

Ձեր պահանջին առնչվող տեղեկատվությունն ուղարկվել է Ձեր վարչաշրջանի Սոցապահովության գրասենյակ կամ Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների դեպարտամենտ: Այդ գործակալության աշխատակիցները կարող են կապվել Ձեզ հետ՝ հայտնելու գործակալության որոշման, իր գործողության հիմքերի եւ Ձեր պահանջի հիմնավորումների վերաբերյալ՝ դրանով փորձելով լուծում տալ խնդրին:

Եթե Դուք ստանում էիք աջակցություն, ապա այն կշարունակվի նույն չափով, եթե Ձեր պահանջը ներկայացվել է մինչեւ առաջարկված գործողության ուժի մեջ մտնելու ամսաթիվը, եւ Դուք պահանջել եք ընթացքի մեջ եղող Ձեր աջակցության շարունակում:

Եթե Դուք այժմ չեք ստանում աջակցություն, ապա չեք ստանա օգնություն, մինչեւ Ձեր նահանգային դատաքննության որոշումը: